

Հետախույզներն ըզմայլեցան, ելան դէպի դարաստանն հարթ
Ուր զեռ հազիւ զարթած էին յասմիկ, շուշան եւ մըրտավարդ-
Յանկապատում թոյլ ճրուղոյում էին հաւքերն էլ սիրատարփ՝
Առաւօտեան սիւբից մըրսած թեւեր, զըլուխ տալով թափթափ:

Ոչ մի շըշուկ էլ չի լըսուեց, մի հըմայքի եղան գերի,
Բուր մարդոց աչքեր դարձան դէպի վըսեմ մի պատկերի...
Մի թաւամազ զամիռ ահարկու որի աչքից կըրակ ցայտէր,
Կըծկած՝ պահէր թաթերի մէջ մի լուսնադէմ մանկան այտեր:

Մի թաթն իրեւ բարձ էր պարզած, հովին դէմ էր տըւած իր դունչ,
Տաքացնելով քընքուշ մանկան որ խաղաղիկ քաշում էր շունչ.
Չէր մըմըրում, չէր խոժոռում որ ահաւոր գիշերից ետք
Հանգիստ առնէր անգին տիրոջ՝ բոցից պըրծած կրախան հէջ...:

Բարիկ

ՀԱՅԿ-ԱՐԱՄ



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Խ Ո Վ

Հայրենի ծով, արինի ծով մոնչող. քու
վըժիկ սև ալիքները կը լսեմ ահա որ կը
ծեծեն Պոստոսի սեպ կողերը:

Ծեծէ՛, ծեծէ՛, ժայռերէն վեր սլացիր,
Թող աշխարհը սասանի ծայրիդ խրոխտ
շառաչէն. թէ և ան խու՛լ՝ բայց դուն
մի՛ ըլլար համը գոհ:

Հայրենի ծով, անմեղութեան օրօրան.
քու անայլայլ ծոցին մէջ կը տեսնեմ ա-
հա քոյրերս մերկավիզ և անատինք, ու
մանկիկներ ու մայրեր որ դէպի ինձ կը
ձգտին:

Յուզուէ՛, յուզուէ՛, քու ծոցդ տունն է
ցեղիս անխոս վըժիխ. յուզուէ՛, թող վէս
Միհրդատ խողի ու Տիգրան իր անվկանգ
բազուկները գրահէ:

Հայրենի ծով, նոր աշխարհի դու դը-
ժուխ. շարժէ՛ ալիքները ամենի, թող ա-
նոնք ջրվէժ դառնան ցեղի կարմիր հե-
ղեղին ու տիեզերքն ողողեն, ինչ փոյթ

մարդոց տառապանքն, երբ դուն վիշտն ես
Աստուծոյ և ամօթի սև խարանը մարդ-
կութեան:

Հայրենի ծով, իմ կարօտի ցանկութիւն.
կաթիլ մ'արիւն, շիթ մը արցունք դիւր
աչքերուս ալին մէջ. թող անոնք իրեւ
վըժժ քարանձառ թարթիչներս իր սլաց-
ները դառնան:

Հայրենի ծով, արցունքի ծով մշտա-
յոյզ. խօսէ՛, խօսէ՛, թող դողդողայ տիե-
զերք որ դու անյազ վիհն եղար ցեղի
անգուսպ հանճարին, և տէր Նիպտոն իր
զահէն թո՛ղ օրհնէ քեզ փոփրադէզ:

Հայրենի ծով, հայրենի ծով սեպօն.
դուն որ մահը եղաւ քեզ յար պաշտողին,
եղիւ և կեանքը անոր, զի մեծ է այն որ
կը քանդէ ու կը շինէ ինչպէս արարիչ
մը հզօր:

Մարտի, 1917

Թ. ԵՂԻՇԷ